

<https://doi.org/10.52027/18294685-mkh2024.1>

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ

ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ

«ԱՐԶԱԳԱՆԳ» ԱՄՍԱԹԵՐԹԻ ՄԱՍԻՆ

**Բանալի բառեր՝** «Արձագանգ» ամսաթերթ, Մարգար Էլիզ եւ Շարաբխանյաններ, վավերագիր, բացառիկ ու արժեքավոր հոդվածներ, հարուստ բովանդակություն:

**Keywords:** “Ardzagank” monthly newspaper, Markar and Elise Sharabkhanian, documentary book, exceptional and valuable articles, rich content.

Լաւագոյնս ծառայած կ'ըլլաս մարդկութեան,  
երթ հաւատարմօրէն եւ յարատեւօրէն ծառայես  
այն ժողովուրդին, որուն կը պատկանիս  
Շաւարշ Միսաքեան

Տորոնտոյի Հ. Ե. Դ. «Ս. Զաւարեան» ուխտի «Արձագանգ» ամսաթերթը (1972 - 1976 թթ.) հետաքրքիր երեւոյթ է Միջուռքի հայ մամուլի պատմության մեջ: Ամսաթերթի 1972 թ. 1-10-րդ համարները լինոտիպ են, իսկ 11-րդ համարի առաջին էջում տեղեկություն կա այն մասին, որ անցել են գլանատիպ (գրված է՝ «Աֆսէթ») տպագրության: Լույս է տեսել «Արձագանգ»ի 58 համար, բոլոր համարների բնաբանը մեկն է՝ «ԽՕՍԲԸ ԱՌԱՆՅ ԳՈՐԾԻ ՄԵՌԵԱԼ Է», իսկ 1975 թ. 1-ին համարից սկսած՝ կազմի 4-րդ էջում կա կոչ՝ «Հայը հայուն հետ հայերէն կը խօսի»: Ամսաթերթի 58 համարները ներկայացված են 48 կազմով. 8 կազմում՝ երկուական, մեկ կազմում երեք համարներ են միավորված:

2022 թ. աշնանն Ուշիում էի: Մարգար եւ Էլիզ Շարաբխանյանների հյուրն էի: Հիշում եմ՝ երբ առաջին անգամ ասացի, որ «Արձագանգ»ի մասին պիտի գրեմ, տիկին Էլիզը քմիծաղով հավելեց, թե իրենց հրատարակած ամսաթերթը «Բագին» չէ: Մինչ ի պատասխան կհնչեր պարոն Մարգարի «Է՛, Էլի՛զ, ան գիտե իր ընելիքը ...» խաղաղարար բացականչությունը, պարզապես ասացի, որ «Արձագանգ»ը կանադահայության համար նույնն է եղել, ինչ է «Բագին»ը լիբանանահայության (անշուշտ, նաեւ՝ հայության) համար: Մենյակում տիրող խորհրդավոր լռությունն արձանագրեց իմ անարյուն հաղթանակը «մարտի դաշտ»ում:

«Արձագանգ»ը Տորոնտոյի հայության կյանքի հինգ տարիների յուրատեսակ օրագիրն է, պատմության մի մեծ հատվածի դեպքերի ու դեմքերի վավերագրությունը, որն այսօր ունի ոչ միայն ճանաչողական, այլեւ ուսուցողական, դաստիարակչական նշանակություն:

«Արձագանգ»ի առաջին համարի «Մեր անկիւնը» խորագրի տակ տպագրված «Ինչո՞ւ այս թերթը» հոդվածում (հեղինակ՝ Հակոբ Կետիկյան) կարդում ենք. «Նոր անուն մը չէ «Արձագանգ»ը Թորոնթոյի հայութեան համար: Նախորդ քանի մը տարիներու ընթացքին լոյս տեսած է ան քանի մը թիւերով, ապա, կամքէ անկախ դժուարութիւններու պատճառաւ դադրած:

Նոր է սակայն Թորոնթոյի Հ. Ե. Դ. «Միմոն Զաւարեան» Ուխտի գաղափարը պարբերաթերթ մը հրատարակել՝ հետագային զայն ամսաթերթի վերածելու հեռատեսութեամբ որդեգրելով իր նախորդին անունը:

Նկատի ունենալով մեր կազմակերպութեան գոյութեան դրդապատճառը եւ ուսումնասիրելով անոր Ծրագիր-Կանոնագիրը, արդարեւ, կը համոզուինք, թէ թերթ մը ունենալը անհրաժեշտութիւն մըն է այս երիտասարդ կազմակերպութեան համար:

39 տարիներ առաջ, երբ Գարեգին Նժդեհի ջանքերով կը հիմնուէր մեր կազմակերպութիւնը, անոր գլխաւոր նպատակներէն մէկն էր մի տեղ հաւաքել Ամերիկայի ու Գանադայի տարածքին՝ ձուլման ենթակայ հայ երիտասարդութիւնը ու անոնք ուսուցանել Հայութեամբ հպարտանալու, հայ լեզուին ու մշակոյթին գոյատեւումն ու ընդհանրացումը իրագործելու արուեստը:

Բոլոր անոնք, որոնք ամերիկահայ կեանքի վերջին 40 տարուան պատմութեան մասին գաղափար ունին, անվարան կրնան հաստատել, թէ Հ. Ե. Դ.-ը, իր կարելիութեան սահմաններուն մէջ, իր առաքելութիւնը իրագործեց մեծ մասամբ:

... Այս թերթը հրատարակելով՝ երբեք յաւակնութիւնը չունինք հայ գրականութեան կամ մամուլին շնորհի մը ըրած ըլլալու: Մեր պատկանած կազմակերպութեան կոչումին ծառայելու ու մեր ներքին կանչին անսալու պարտաւորութիւնն է, որ կը թելադրէ մեզի այս պատասխանատու քայլը առնելու:

Մեր ակնկալութիւնները շատ համեստ են: Չենք ուզեր ծանրակշիռ խոստումներ կատարել: Ընթերցող հասարակութենէն կ'ակնկալենք բարոյական աջակցութիւն, որուն կը կարծենք, թէ արժանի ենք՝ նկատի ունենալով մեր վճռականութիւնը թերթ հրատարակելու ամէն դժուարութեանց դիմադրելու:

Կը հաւատանք, որ հայ երիտասարդութիւնը, եթէ պէտք եղած քաջալերանքը ստանայ, կրնայ իր գոհացուցիչ նպաստը բերել մերօրեայ հայ իրականութեան» [«Արձագանգ» (Տորոնտո) ամսաթերթ, 1972, №1, 12-13]:

Հետաքրքիր ու մտածելու հարուստ նյութ է ամսաթերթի առաջին համարի «Հայութենէն անբաժան» խորագրի տակ հրատարակված ««Թակարդ»ին մէջ» վերլուծականը, որի հեղինակը Էլիզ Հասըրճյանն է: Խոսքն Ուիլյամ Սարոյանի «Ռագ Ուակրամ» անգլերէն վեպի եւ Շառլ Ագնավուրի՝ Խորհրդային Հայաստան այցելությունից հետո արած հայտարարությունների մասին է: Վեպի հերոսը հասնում է աներեւակայելի հաջողությունների, հասկանում է ազգային արմատներից կտրված լինելու հանգամանքը, որոշում է վերագտնել իրեն հայության մէջ, բայց բախվում է միայն անունով հայ կոչվող գավակներից զրկվելու վտանգին (գրողի կենսագրությունից ծանոթ փաստ է):

Վեպում ներկայացված է Սփյուռքի հայության երեք շերտ՝ հայության մէջ առանձնացածներ, ոսկե միջինը փնտրողներ եւ «ծանծաղ ամերիկացի» դարձածներ, որոնց հեղինակը պարզապէս դատապարտում է: Հոդվածում հիշատակվում է Ուիլյամ Սարոյանի վեպի մասին քննադատ Հաուրըրտ Ֆլոնի խոսքն այն մասին, որ «գրքին հայկական մթնոլորտը կը կայանայ վեպին լաւագոյն տարրը» [Արձագանգ, 1972, №1, 11]:

«Սփիւռք» (Բեյրութ) շաբաթաթերթի 1971 թ. 47-րդ համարում «Յիշատակներ կորսուած Հայրենիքէն» խորագրով տպագրված է Շառլ Ագնավուրի խոսքը: «Դեռ երգ մը չնութեցի ժողովուրդիս. Ինքզինքս յանցաւոր կը զգամ», – ցավով ասում է հանրահռչակ երգիչը եւ հավելում. «Աշխարհ պտըտեցայ, երբեք չմոռցայ, որ Հայ էի» [«Սփիւռք» (Բեյրութ) շաբաթաթերթ, 1971, նոյեմբերի 21-ի համար, 7]: «Երկու արուեստագէտ՝ ամերիկացի աշխարհահռչակ գրող եւ ֆրանսացի նշանաւոր երգիչ, երկու հայ, որ կը մնան հայութեան «թակարդ»ին մէջ՝ երբեմն չմոռնալով փառաւորել զայն կամ փառաւորուիլ անով», – այսպէս է ավարտվում այս հետաքրքիր հոդվածը [«Արձագանգ», 1972, №1, 11]:

Հոդվածին հաջորդում է Ուիլյամ Սարոյանի՝ Կարո Գեւորգյանին հասցեագրած անգլերէն նամակից մի հատված՝ հայերեն թարգմանութեամբ. գրողը «խորունկ հիացումս, իմ խոնարհ յարգանքս, իմ ջերմագին յոյսն» է հղում բոլոր նրանց, ովքեր գրում ու կարդում են հայերեն, եւ կատարում այսպիսի եզրահանգում. «հայերէն, եթէ կարելի է, ուրիշ որեւէ լեզուով, եթէ պէտք է, որովհետեւ լաւ մարդիկ ու լաւ գրուածքը տիեզերական են» [Նույն տեղում]:

Ամսաթերթի էջերում պահպանվել են բազմաթիվ բացառիկ ու նաեւ մեր օրերի համար արժեքավոր հոդվածներ: Թվարկեմ մի քանիսը՝

ա) «Թուրքի խոստովանություն: Մեր մասին թող հարցնեն հայերուն» (1972 թ. 3-րդ համար):

«Յառաջ» (Փարիզ) օրաթերթի 1971 սեպտեմբեր 11-ի եւ 12-ի համարներում տպագրված է Հրանտ Սամուելի «Քրտական հարցը օրակարգի վրայ» հոդվածը, որն անդրադարձ է թուրք ազգայնամոլ մի գնդապետի բարբառանքին: Թուրքը հպարտությամբ նշում է, որ ուրիշների հողերը զավթելու համար «գետի պէս» արյուն են թափել ու «արմատեն բնաջնջել» նաեւ հայերին: Թուրքի՝ «Մեր մասին թող հարցնեն հայերուն եւ թող օգտուին անոնց առած դասէն» հոխորտանքին հաջորդում են նախ՝ Հրանտ Սամուելի «Վերջին տողերը ստորագծեցինք շեշտելու համար, որ թուրքը մնացած է նոյն արինարբու ցեղասպանը» զգուշացումը [«Յառաջ» (Փարիզ) օրաթերթ, 1971 թ. սեպտեմբեր № 11-12], ապա՝ «Արձագանգ»-ի խմբագրության պատասխանը. «Իսկ եթէ անպայման պէտք է պատասխան մը տրուի, այդ պատասխանը պէտք է ուղղուի թուրքէն «տարբեր ձեւով», ոչ թէ գրաւոր կամ բերանացի...» [Արձագանգ, 1972, №3, 18]:

Այս ոգով հոդված կա ամսաթերթի 1974 թ. 10-րդ համարում՝ «Շնորհակալություն, Թուրքիա» խորագրով (հեղինակ՝ Զարեհ Տերվիշյան): «Թուրքը չի փոխվում», – սա է այս հոդվածագիրների (եւ ոչ միայն նրանց) եզրակացությունը:

բ) 1973 թ. 11-րդ համարում՝ «Հայրենիք եւ հայրենասիրություն» (հեղինակ՝ Լուսեր Մասպանաճյան) հոդվածի «Գաղութահայությունը երկու հայրենիք ունի՝ Հայաստանը եւ մեր ապրած երկիրները: Երկու հայրենիք ունենալու պարագան մեր վրայ կը դնէ կրկնակի պարտաւորություն՝ սիրել եւ ծառայել երկուքին ալ, մինչեւ որ իրականանայ ազատ եւ անկախ Հայաստանի ստեղծումը» եզրակացությունը վիճարկելի է: Պաղեստինի նախագահ (1993-2004) Յասեր Արաֆաթն (1929-2002) ասում էր, որ Բնօրրան կորցրած հայության ճակատագրական սխալը օտար երկրների քաղաքացիություն ընդունելն ու գույք գնելն է: Նա ազգակիցներին, հայերի օրինակով, նախազգուշացնում էր չկորցնել Բնօրրանի հետ գենետիկ կապը:

գ) 1974 թ. 1-2-րդ համարում տպագրված է «Լիբանանէն Գանատա... Ի՛նչ տարածություն» խորհրդածությունը (հեղինակ՝ Միհր Աճեմյան): Հակոբն անցել է այդ հսկայական տարածությունը եւ ստիպված է անկեղծորեն ինքն իրեն պարզաբանել «ամէն հայու համար» կենսական երկու հարց՝ հակասությունը միջավայրի հետ եւ հայ լինելու պարտադրանքը: Լուծումը սա է. «Առաջին հակասութեանս համար պէտք է համոզեմ ինքզինքս, «որ վաղը լաւ կ'ըլլայ»: Երկրորդ հակասութեանս համար պէտք է սպասեմ, որ «վաղը» գայ:

Սպասեմ, չարչարուիմ ու մինչ այդ ապրիմ իբրեւ անասուն: Ուտեմ, խմեմ, պառկիմ եւ աշխատիմ: Կրկին ուտելու, խմելու եւ աշխատելու համար ... Անհեթեթ պատրանք ...

Լիբանանէն Գանատա ... Ի՛նչ տարածություն, ուր հայ հոգիներ կը ճախրեն՝ իրենց հիմնական երկու հակասությունները շաղկաւ իրենց թելերուն մէջ: Խաբկանքներու մէջ օրօրուելով, հայապահպանում խաղալով՝ փորձել երկարաձգել հոգեվարքը, եւ հետեւաբար Հայ Դատ կոչուած «երազը» ...

Իսկ արդեօք «երազները» ... կ'իրականանա՞ն:

Լիբանանի մէջ՝ ոչ: Գանատայի մէջ ... տակաւին չեմ գիտեր ...» [«Արձագանգ» ամսաթերթ, 1974, № 1-2, 55]:

գ) 1974 թ. 5-րդ համարում տպագրված «Մարտի հաշուեյարդարը յունիսին» (ստորագրված է՝ Ա.) հոդվածում անդրադարձ կա 1974 թ. մարտի 6-ին: Այդ օրը ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնախումբը քննարկել է ցեղասպանության եւ խտրականության դեմ միջոցառումների տեղեկագիրը, որից հանել են Հայոց ցեղասպանության մասին հատվածը՝ 30-րդ կետը: «Հայրենիք» (Բոստոն) օրաթերթը 1974 թ. մարտի 10-ի համարի «Ամօթալի, սեւ օր մը ՄԱԿ-ի համար» հոդվածում (հեղինակ՝ Լեւոն Քեշիշյան) արձանագրում է, որ «միջպետա-

կան հաշիւներու բերումով, բազմաթիւ երկրներ կը պաշտպանեն թրքական տեսակէտը» [«Հայրենիք» (Բոստոն) օրաթերթ, 1974, մարտի 10-ի համար]: «Արձագանգ»ի հոդվածին հաջորդում է խմբագրության խոսքը՝ «Օտարէն չկայ փրկութիւն» վերնագրով. հայության փրկությունը միասնականությունն է:

դ) 1975 թ. 12-րդ համարի «Մփիւոքահայութեան անտարբեր տարրը» (հեղինակ՝ Սեդո Պոյաճյան) հոդվածն անկեղծ գրույց է ընթերցողի հետ. թող ամեն սփյուռքահայ որոշի՝ ինքը ո՞ր խմբում է՝ «անմիջական կարիքներով կլանուած»նե՞րի, թե՞ «ընդհանրական կարիքներով եւ ձգտումներով կլանուած»ների: «Նուիրեալներու սահմանափակ թիւով ներկայացող փաղանգի» առջեւ շատ բարդ խնդիրներ են ծառանում ...

Այս հեղինակի «Հայը գաղթող արարած չէ» խորագրով հոդվածը, որ հրատարակված է «Արձագանգ»ը 1975 թ. 10-11-րդ համարում, ներգաղթի կոչ է սփյուռքահայությանը:

ե) 1975 թ. 9-րդ եւ 10-11-րդ միացյալ համարներում տպագրված է Ս. Սրապի «Թուրքը եւրոպացի չի դառնար, բայց Եւրոպան կրնայ թուրքանալ» ծավալուն հոդվածը: Հեղինակը Զարեանդի (Զավեն Նալբանդեան, 1890-1973) «Ի՞նչ կը ծրագրեն թուրքերը կամ Միացեալ, անկախ Թուրանիա» (հայերեն՝ 1926 թ., անգլերեն՝ 1971 թ.) գրքից հիշեցնում է «Թուրքիան եզան սայլով նապաստակ կրնայ որսալ» [«Արձագանգ» ամսաթերթ, 1975, №9, 24] ժողովրդական խոսքը, որն այլաբանական խորքով սպառնալիք է հարեւան ու ոչ հարեւան ժողովուրդներին: Հեղինակը փորձում է գտնել «Արդ, թուրքը իր չունեցած բարոյական, մարդկային ո՞ր արժէքին միջոցաւ կրցաւ բոլոր այդ եւրոպացիներուն քուէները ունենալ հայկական ջարդերուն ուրացման համար: Ի՞նչ բաներով թուրքը կրցաւ անոնց պարտադրել իր կամքը եւ անոնց բարեացկամութիւնը շահիլ...» [«Արձագանգ» ամսաթերթ, 1975, № 10-11, 14-15] հարցի պատասխանը, որը կա հենց հարցի ձեւակերպման մեջ՝ «քաղաքակիրթ» բառի միջոցով:

Ամսաթերթի 1-ին համարից հաճախադեպ են հանդիպումները Շաւարշ Նարդունու գրական էջերին: Երբ գրուցում էի Մարգար Շարաֆխանյանի հետ, հասկանում էի՝ այս գրողի նկատմամբ պարոն Մարգարի սերն ու խոնարհումը պայմանավորված էր ոչ միայն ազգակցական կապով (Նարդունին Մարգար Շարաֆխանյանի մայրիկի եղբորորդին էր), պատանեկան տարիների հիշողություններով, երախտագիտությամբ, այլեւ աշխարհայացքային նմանություններով, առաջին հերթին՝ «Հայաստանը ամէնէն առաջ» ապրելակերպ դարձած սկզբունքով:

Հետաքրքիր դեպք պատահեց վերջերս: «Արձագանգ»ի 1972 թ. 11-րդ համարում տպագրված է «Վերապրումներ» հուզիչ հոդվածը: Հեղինակը Մարգար Շարաֆխանյանն է: Հոդվածի շարվածքն ուղարկեցի տիկին Էլիզին: Պարզվեց՝ երկմտել է. Նարդունի՞ն է հեղինակը: Պարզաբանեցի. անկեղծ ու ազնիվ գիրը միշտ էլ նարդունիական շունչ ունի՝ անկախ այն հանգամանքից, թե ո՞վ է գրիչ վերցնողը:

Ամսաթերթի բոլոր համարներն աչքի են ընկնում հարուստ բովանդակությամբ:

Որպէս ապացույց՝ համառոտ ներկայացնեմ ամսաթերթի մշտական բաժիններից մի քանիսը՝

1. Խմբագրական հոդվածները հայության եւ հատկապէս՝ կանադահայության կյանքի հուզող հարցերի մասին են:

2. ՀՅԴ նշանավոր գործիչների կյանքին ու գործունեությանը նվիրված էջեր կան ամսաթերթի գրեթե բոլոր համարներում, գաղափարական ինչ-ինչ հարցերի նվիրված էջերը, հասկանալի պատճառներով, հաճախադեպ են:

3. Պարբերաբար ներկայացված է կուսակցական զանազան մարմինների եւ կանադահայ բազմազան կազմակերպությունների գործունեությունը: Բացառիկ ուշադրություն է նվիրված ՀՕՄ-ի ձեռնարկներին, ամառային դպրոցների եւ Տորոնտոյի «Հայ կեդրոն»ի գործունեությանը:

4. Հայ եւ համաշխարհային մշակույթի ճանաչված դեմքերին նվիրված բազմաթիվ էջեր եւ նրանց ստեղծագործություններից հատվածներ կան ամսաթերթում: «Արձագանգ»ի

էջերում, հասկանալի պատճառներով, ավելի շատ են չափածո ստեղծագործությունները՝ հայ հին ու միջնադարյան քնարերգությունից մինչև Պարույր Սեւակ:

5. Թարգմանական էջերից թվարկեմ երկուսը՝

ա) 1972 թ. 4-րդ համարում՝ «Նիւ Եոթք Թայմզ»ի 1972 թ. ապրիլի 2-ի համարում Փիթըր Գոլիերի հոդվածը Ուիլյամ Սարոյեանի «Վայրերը, ուր եղել են ես» գրքի մասին՝ «Ես նոյնն եմ, բայց տարբեր» խորագրով: Հոդվածը թարգմանել է Էլիզ Հասըրճյանը:

Հավելեմ՝ այս հոդվածը լույս է տեսել նաև «Սփիւռք» (Բեյրութ) շաբաթաթերթի 1972 թ. հուլիսի 2-ի համարում:

բ) 1973 թ. 11-րդ համարում հրատարակված «Հպարտ ենք հայերով» (հեղինակ՝ Ճաք Պիլ) հոդվածը Ֆրեզնոյի «Ֆրեզնո Պի» օրաթերթի 1973 թ. օգոստոսի 21-ի համարում տպագրված անգլերեն հոդվածի թարգմանությունն է: «Այս հպարտ ժողովուրդը ամենէն յաջողածներն է բոլոր մարզերու մէջ», – այսպես է գնահատում ամերիկացին հայության դերը իրենց երկրում [«Արձագանգ» ամսաթերթ, 1972, № 11, 24]:

6. Ամսաթերթը պարբերաբար անդրադարձել է մանկավարժական հարցերի քննությանը, ուներ նաև մանկական էջ:

7. Ամսաթերթում մշտական էին «Լուրեր Հայրենիքէն» եւ «Լուրեր Սփիւռքէն» էջերը:

8. Ժամանցի էջերը հիմնականում խաչքառեր են:

9. «Արդի հայ գրականության հետքերով», «Արեւելահայ գրականութիւն», «Գանատական գրականութիւն», «Ամերիկեան գրականութիւն», «Յունական արդի գրականութիւն» բաժինները հերթագայել են ամսաթերթի էջերում:

«Արդի հայ գրականության հետքերով» շաբթի 18 հոդվածների հեղինակը Մարգար Շարափխանյանն է. այս հոդվածները լույս են տեսել ամսաթերթի 1972 թ. 1-ին համարից մինչև 1973 թ. 11-րդ համարը:

«Արեւելահայ գրականութիւն» շաբթը կազմել է Սոնա Հովհաննեսյանը՝ ըստ Մինաս Թեղեղյանի «Դար մը գրականութիւն» հատորների: Շաբթի յոթ մասերը լույս են տեսել ամսաթերթի 1974 թ. համարներում՝ սկսած 4-րդ համարից: Նշվում է՝ «Ամփոփեց Սոնա Յովհաննեսեան»):

10. Տրոնտո այցելած նշանավոր մարդկանց հետ (Արամ Հայկազ, Պողոս Սնապյան, Հակոբ Կարապենց, Վահե Օշական, Մուշեղ Իշխան, Կարապետ Փոլատյան, Սիլվա Կապուտիկյան եւ այլք) հանդիպումների, նրանց հիշատակին նվիրված ձեռնարկների մասին պատմող էջերը շատ հետաքրքիր են, ինչպես նաև Հակոբ Օշականի, Եղուարդ Պոյաճեանի, Պարույր Սեւակի հիշատակին նվիրված հոդվածները:

Հավելեմ՝ «Սփիւռք» (Բեյրութ) շաբաթաթերթի 1972 թ. հունիսի 18-ի համարում տպագրված է Մարգար Շարափխանեանի՝ Պարույր Սեւակի հիշատակին նվիրված հոդվածը:

11. Արա Պալիոզյանի ստորագրությամբ անգլերեն նյութեր կան ամսաթերթի՝ 1973-ի 5-րդ, 8-րդ, 12-րդ, 1974-ի՝ 1-2-րդ, 8-10-րդ, 12-րդ համարներում, իսկ 1974 թ. 6-7-րդ միացյալ համարում տպագրված է անգլերեն հոդվածը Պալիոզյանի հետ հանդիպման մասին:

12. Մամուլից կարելու է հետաքրքիր էջեր կան:

Այսպես՝ «Արձագանգ»ի 1975 թ. 6-7-րդ եւ 8-րդ համարներում անդրադարձեր կան «Հայրենիք» օրաթերթի երկու խմբագրական հոդվածներին՝ «Կենսունակ Թորոնթոն հոգատարության կարօտ է» (օր-ամիս-տարի չի նշվում) եւ «Գանադահայության հետ» (հուլիս 11 1975 թ.): Այդ հոդվածներում արժեւորվում են կանադահայության ջանքը եւ ակնառու ձեռքբերումները, բայց տազնապի ահագանգ կա՝ «նորահաստատ գաղութը» ոչ միայն նիւթական միջոցների, այլեւ փորձառու մարդկանց օգնության կարիքն ունի:

Երկրորդ հոդվածը ավելի է խորացնում տազնապի շերտերը՝ անդրադառնալով սփյուռքահայության կյանքի երկու հակադիր եզրերին՝ «ազգային ինքնապահպանումի գաղափարին», որը «փրկութեան լաստ է» հայության համար, եւ «անձնատրութիւնը ինքնագոհութեան զգացումին», որը «ապաստերումի զառիթափ մը»ն է:

Ամսաթերթի 1974 թ. 5-րդ համարում արտատպված է Էրեբունի թանգարանի մասին ծավալուն հոդված՝ «Սովետական Հայաստան» թերթից:

13. Շատ հետաքրքիր հոդվածներ կան արվեստի տարբեր ճյուղերի մասին:

Ամսաթերթի 1972 թ. 1-ին համարի հայերեն մասն ավարտվում է Տորոնտոյի «Յ. Մանուկեան» գրադարանի (բացվել է 1971 թ. հոկտեմբերին) գրքերի մասին հայտարարության աշխատակիցների ուշադրության կենտրոնում: Պահպանվել են նաև գրադարանի գրքերի մասին տվյալներով առանձին թերթիկներ, բազմաթիվ անդրադարձեր կան ընթերցողների համար կազմակերպված ձեռնարկների մասին:

1972 թ. 5-րդ համարում հրատարակված է «Յարութին Մանուկեան» գրադարանի գործունեության մասին հոդված:

1973 թ. 1-ին համարում «Պատասխան Ս. Սրապին» խորագրի տակ տպագրված է Էլիզ Հասրճյանի «Հայ գիրքերու հանդէպ ծո՞ւռ եւ սխա՞լ մօտեցում» հոդվածը, որտեղ հայ գրքին առնչվող շատ լուրջ հարց է քննարկվում: Ս. Սրապը իսկապես ծուռ հայելու մեջ է տեսնում տորոնտոյահայության եւ հատկապես «Յարութին Մանուկեան» գրադարանի աշխատակիցների ջանքերը՝ հայ գրքի տարածման հարցում: Գաղտնիք չէ, որ սփյուռքահայերը ստիպված են ամեն օր հաղթահարել նորանոր խոչընդոտներ: Նա գրադարանի աշխատակիցների գործունեությունն անվանում է «մուրացկանություն», որին հակադրում է «Հայ գրականության բարեկամներու միություն» գովաբանումը:

Համոզված եմ՝ Տորոնտոյի հայության ձեռքերումների կարելուր նախապայմանը գրքի նկատմամբ հարգանքն է (եւ ի նչ համեմատություն կարող է լինել մեր օրերում գետնանցումների աստիճաններին կուչ եկած գրքերի հետ ... ազատ ու անկախ Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքում): Գրքին նվիրված ձեռնարկներից անբաժան են ամենատարբեր ձեւաչափերով կազմակերպված հանդիպումները գրողների հետ. անունները թվարկելն անգամ դժվար է:

14. Ամսաթերթում «Նամակներ խմբագրութեան», «Ի՞նչ գրեցին մեզի» եւ «Ի՞նչ գրեցին մեր մասին» խորագրի տակ հետաքրքիր տվյալներ են հրատարակել՝ կապ հաստատելով ընթերցողների հետ:

«Արձագանգ»ի խմբագրական կազմի մասին հետաքրքիր տեղեկություններ կան Օննիկ Շարաբխանյանի՝ Մարգար Շարաբխանյանի հոր «Կամաւոր բանակ» հոդվածում, որ տպագրված է ամսաթերթի 1976 թ. 12-րդ համարում: Հոդվածագիրն արձանագրում է կամավոր աշխատակիցների աշխատանքի մի քանի դժվարություններ, քանի որ ամսաթերթը «չունի (վճարովի) բաժանորդագրութիւն, նաեւ վճարովի պաշտօնեութիւն. կամաւոր աշխատաւոր, կամաւոր վճարող»:

Ներկայացնենք ամսաթերթի աշխատակիցներից մի քանիսին:

Սիմոն եւ Լեւոն Հասրճեանների ստորագրությամբ տպագրված են բազմաթիվ հոդվածներ, արձակ եւ թարգմանական էջեր՝ 1972 թ. 3-րդ համարում՝ «Ապրիլ 24-ը ազգային «գործիք» եւ «Հ. Ե. Դ.-ի Պատգամաւորական ժողովը» (ստորագրված է՝ Ս. Հ.), 5-րդ համարում՝ «Հանդիպում», 6-րդ համարում՝ «Ամառնային վարժարան», 7-րդ համարում՝ «Կէս լուրջ, կէս կատակ. Թորոնթահայ կատակերգութիւն», 11-րդ համարում՝ «Նուագախումբի Բ. Ձեռնարկը», 1972 թ. 12-րդ համարում՝ «Վայրագ բնութիւն», 1973 թ. 1-ին համարում՝ «Արձանագործը», 5-րդ համարում՝ «Անիծուած կածանը», 7-րդ համարում՝ «Հնդկիկն օձը», 9-րդում՝ «Ամէնօրեայ ամառնային վարժարանի հանդիսութիւնը», 1974 թ. 1-2-րդ համարում՝ «Մեւ կատուն», (Էդգար Ալան Պո-ի պատմվածքը թարգմանել է Սիմոն Հասրճյանը), 3-րդ համարում՝ «Դէպի քաղաքականացում», «Մարդանման գաղութ» եւ «Մշակութային ձեռնարկ», 9-րդ համարում՝ «Հ. Ե. Դ.-ի անկիւն», 1975 թ. 1-ին համարում՝ «Որոշումը», (Հիու Կարնըր-ին թարգմ. է Սիմոն Հասրճյանը), 2-րդ համարում՝ «Աճապարը», 6-7-րդ միացյալ համարում՝ «Մեր ամէնօրեան ու հանդէսը» հոդվածները:

Ամսաթերթի գործուն թղթակից Հակոբ Կետիկյանը տեղեկություններ է տալիս տարբեր ձեռնարկների մասին՝ 1972 թ. փետրվարի 26-ի «Գրական-արտասանական երեկոյ»ի (1972, №2), նույն տարվա ապրիլի 15-ին եւ 30-ին «Պաշտասար աղբար»ի ներկայացման մասին (1972 №4՝ «Վերջը»), «Ապրիլ 24-ի խոհեր» (1972, №3), «Պարոյր Մեւակի յիշատակին» (1972, №5), ««Արձագանգ»ի հանդիպումներէն» (1972, №8, ստորագրված է՝ Յ. Կ.), «Հանդիպում» (1972, №10), «Գործակցութեան ոգի» (1972, №11), «Լուծուած հարցը» (1973, №2), «Հ. Ե. Դ.-ի Պատգամաւորական ժողովի առթիւ» (1973, №4), «Հ. Օ. Մ.-ի դպրոցի պարախումբի ելոյթը» (1973 թ. 5-րդ համար), «Քաղաքական լուծում» (1974, №1-2 (միացյալ)):

Լուրեր Մասպանաձյանի հոդվածներից հիշատակեմ մի քանիսը՝ «Փուտպոլիստներուն եւ հանդիսատեսներուն» (1972, №7), «Միջազգային 20-րդ ողիմպիականը» (1972, №8), ««Արձագանգ»ի Ա. Տարեդարձին առթիւ» (1973, №1), «Սերունդէ սերունդ» (1973, №3), «Մայիս 28-ի 55-ամեակի առթիւ» (1973, №4), «Եկէք ու տեսէք» (1973, №8), «Ողիմպիական խաղերէն վերջ» (1973, №9), «Հայրենիք եւ հայրենասիրութիւն» (1973, №11), Վարդան Մամիկոնյանի հիշատակին նվիրված «Ինկաւ, բայց յաղթեց» (1974, №1-2-րդ (միացյալ)), ««Արձագանգ»ի երրորդ տարուան սեմին» (1974, №1-2, (միացյալ)), «Անգութ բորենիներ» (1974, №3), «Մայիս 28-ի առթիւ» (1974, №4), «Անյեղի սկզբունքներ» (1974, №8), «Կարգապահութիւն» ծավալուն հոդվածը (1975, №2 եւ №3), «Հայ երգն ու երաժշտութիւնը» (1975, №6-7 (միացյալ)):

«Արձագանգ»ի 1976 թ. 8-9-10-րդ միացյալ համարը նվիրված է Լուրեր Մասպանաձյանի հիշատակին: Այդ համարում տպագրված են Լուրեր Մասպանաձյանի «Հ. Յ. Դ.-ի դերը հայ կեանքին մէջ» հոդվածը եւ Հրայր Մասպանաձյանի «Կենսագրական տողեր»ը՝ հոր մասին:

Գալուստ Պապյանը հանրաժանոթ լուսանկարիչ էր եւ բարձրաճաշակ մտավորական: Նրա հրատարակած հոդվածներից հիշատակեմ՝ «Խորհրդածութիւններ «Քօրրատօ»ի բեմադրութեան առիթով» (1974 , №11), «Հաւատամքի մը արձագանգը (1975, №1), 1975 թ. հոկտեմբերի 25-ին Մուշեղ Իշխանին նվիրված ձեռնարկի ժամանակ Գալուստ Պապյանի խոսքը՝ «Պատիւ ւ հաւատաւոր Իշխանին» (1975, №9): Առաջին հոդվածին արձագանքել է Սոնա Հովհաննեսյանը «Գալուստոյ բարի» (1975, №12) հոդվածով: Նա դժգոհում է, որ Պապյանը տեղյակ չէ տորոնտահայության կյանքի դժվարություններին եւ կոչ է անում քննադատության փոխարեն միանալ նրանց, ովքեր ամեն օր հաղթահարում են նորանոր խոչընդոտներ ու փորձում կենդանի պահել հայ թատրոնի ոգին:

\*\*\*

Ամսաթերթի խմբագիրը՝ երջանկահիշատակ Մարգար Շարաբխանյանը (1937-2023), ստորագրել է՝ Մ. , Մ. Շ., համոզված եմ՝ նաեւ բազմաթիվ անստորագիր հոդվածների եւ գեղարվեստական էջերի հեղինակն է: Խմբագրականների վերլուծությունն առանձին եւ ծավալուն քննարկման նյութ է: «Արձագանգ»ի 1972 եւ 1973 թթ. համարներում հրատարակված են Մարգար Շարաբխանյանի «Արդի հայ գրականութեան հետքերով» ծավալուն ուսումնասիրության 18 մասերը: Մարգար Շարաբխանյանի հեղինակած «Յունական արդի գրականութիւն» շարքն սկսվում է ամսաթերթի 1972 թ. 5-րդ համարում եւ շարունակվում 1973 թ. 5-րդ համարում:

Հայ գրողների մասին Մարգար Շարաբխանյանի հոդվածները լույս են տեսել ամսաթերթի բազմաթիվ համարներում: Թվարկեմ՝ 1972 թ. 5-րդ համարում՝ «Երթ մահաբեր (Պարոյր Մեւակի մահուան տարելիցին)», 8-րդ համարում՝ «Հայ գրականութեան կորուստներէն» խորագրի տակ՝ «Խորհրդածութիւններ Նշան Պէշիկթաշլեանի մահուան առթիւ», 1973 թ. 1-ին համարում՝ «Նոր գրքեր» խորագրի տակ՝ «Կարթագենի դուստրը», 2-րդ համարում՝ «Որակաւոր բանաստեղծներ» խորագրի տակ՝ «Նիկողոս Սարաֆեան», 1974 թ. 9-րդ համարում՝ «Շահան Շահնուր եւ իր սերունդը» հոդվածները:

1974 թ. 1-2-րդ միացյալ համարի «Մամուլ: Միբեղի ձայներ ... (Փուշերը եւ վարդերը՝ մամլոյ անդաստանին մէջ)» հոդվածը ստորագրված է՝ Մ., 6-7-րդ համարի «Գարաւան 74» խորագրի տակ «Դէպի լաւագոյնին ձգտող ձեռնարկ մը» հոդվածը ստորագրված է՝ Մարգար:

Մարգար Շարափխանյանն օժտված էր բանաստեղծական շնորհով. 1973 թ. 6-րդ համարում «Յիշենք մեր հերոսները» խորագրի տակ «Խանասորի – 1897 – արշաւանքի առթիւ» հարգանքի ու խոնարհումի մի քանի տողերին հաջորդում է անստորագիր «Խանասորի արշաւանքը» բանաստեղծությունը: 1973 թ. 8-րդ («Հայ հերոսներուն»), 10-րդ («Քայլերգ») համարներում կան անստորագիր բանաստեղծություններ:

Հետաքրքիր է 1974 թ. 12-րդ համարի «Օրերուն հետ» խորագրի տակ «Ներածութիւն հայ քրիստոնէական գրականութեան» հոդվածը Գարեգին արքեպիսկոպոս Սարգիսյանի<sup>8</sup> նույնանուն անգլերեն գրքուկի մասին (ստորագրված է՝ Մ.):

Մի քանի օտար լեզուների լավ իմացությունը Մարգար Շարափխանյանին օգնում էր հարստացնել ամսաթերթի բովանդակությունը հունարենից եւ իտալերենից կատարած թարգմանություններով: Այսպէս, ամսաթերթի 1972 թ. 7-րդ համարում տպագրված են «Գոնդանտինոս Գավաֆիս» հոդվածը եւ հուլյն գրողի «Քաղաքը» Մարգար Շարափխանյանի թարգմանությամբ, 1973 թ. 5-րդ համարում՝ «Անտոնիոս Սամարազիս» հոդվածը եւ նրա «Յոյս կ'ուզուի» բանաստեղծությունը, 1974 թ. 5-րդ համարում՝ «Օտար բանաստեղծներ» խորագրով՝ «Գանատանթինոս Գավաֆիս (1863-1933)» հոդվածը եւ «Պարիսպներ», «Պահուրտած բաներ» ստեղծագործությունները, 1975 թ. 8-րդ համարում՝ «Երկու բանաստեղծութիւն «Նոպէլ» մրցանակաւոր յոյն բանաստեղծէն. Երկիոս Մէֆէրիս»: Հունարենից թարգմանությունների թագն ու պսակը եղավ Նիկոս Կազանձակիսի «Ճգնութիւն» խոհափիլիսոփայական երկի հայերեն հրատարակությունը, որի մասին Մարգար Շարափխանյանն ընթերցողին ավետում է ամսաթերթի 1973 թ. 5-րդ համարի 29-րդ էջում, իսկ 9-րդ համարում «Միջազգային գրականութիւն» խորագրով Մարգար Շարափխանյանի ստորագրությամբ տպագրված է «Չեզարէ Փավէզէ» հոդվածը:

Ներկայացնեմ նաեւ Էլիզ Հասըրճյանի՝ տիկին Շարափխանյանի (Շարափխաններն ամուսնացել են 1975 թ. սեպտեմբերի 7-ին)՝ ամսաթերթում հայերեն ու անգլերեն հրատարակած հոդվածների ընդհանուր պատկերը:

Սկսեմ Ուիլյամ Սարոյանից. 1972 թ. 4-րդ համարում՝ թարգմանություն, 6-րդ համարում՝ «Գրքեր մեր մասին» անգլերեն հոդվածը, 7-րդում՝ հատված «Հայը և հայը» խոհագրությունից, 8-րդում եւ 11-րդ համարներում՝ անգլերեն հոդվածներ գրողի մասին:

1973 թ. 1-ին համարում տպագրված է «Պատասխան Ս. Սրապին» սուր հրապարակախոսական հոդվածը, 6-րդ համարում՝ «Հայաստանը Թորոնթոյի մէջ», 7-րդ համարում՝ «Գինովցի՛ր» բանաստեղծությունը (թարգմանություն է), 9-րդում՝ «Այս պատմութեան մէջ ո՞ր մէկն է ճիշդը», 10-րդում՝ «Չորս տարի Քիւրտիստանի լեռներուն մէջ» գրախոսությունը եւ «Գանատական գրականութիւն» խորագրով մի քանի թարգմանություններ, 11-րդում՝ «Հ.Յ.Դ. 83-րդ ամեակ», 12-րդ համարում՝ «Դաւաճանութիւն» եւ «Գանատական գրականութիւն» հոդվածները:

Ամսաթերթի 1974 թ. համարներում տիկին Էլիզի ստորագրությամբ տպագրված են՝ 1-2-րդ միացյալ համարում՝ «Ամերիկեան գրականութիւն», «Եւ նաւը սուլեց...» գրախոսականը, նաեւ անդրադարձ ՀՕՄ-ի ամենօրյա ամառային վարժարանի Ճաշկերույթին, 3-րդ համարում՝ «Հաղորդութիւն հայութեան հետ», 4-րդ համարում՝ «Հայկական իրականութեան նորոյթը Նոր աշխարհի ավերուն», «Հ. Ե. Դ. «Ս. Զաւարեան» ուխտի 10-ամեակի տօնակատարութիւն» եւ «Պատշգամբ՝ սիմէնթէ տանիքներու վրայ» հոդվածները, 6-7-րդ համարում՝

<sup>8</sup> 1973-1977 թթ. Ամերիկայի Արեւելյան նահանգների եւ Կանադայի թեմի առաջնորդ, հետագայում՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Բ (1983-1994) եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա (1995-1999) Գարեգին Սարգիսյանն է (1932-1999):

«Ըսեմ ձեզի...» (թարգմանություն է), 8-րդ համարում՝ ««Մուսա լեռան քառասուն օրերը» եւ ճամբորդակիցս» եւ «Տարեկան հանդես» հոդվածները, 9-րդում՝ «Գանատական գրականություն», 10-րդում՝ «Գրական երեկոյ Եդուարդ Պոյաճեանի հետ» հոդվածը:

«Արձագանգ»ի 1975 թ. 2-րդ եւ 12-րդ համարներում տպագրված են տիկին Էլիզի «Գանատական գրականություն» հոդվածները, 3-րդ համարում՝ «60-ամեակի խորհուրդը», 8-րդ համարում՝ «Նոր աշխարհի հին սերմնացանները» գրախոսականը, 4-5 միացյալ համարում՝ «Ապրիլեան Եղեռնի յուշատօն Թորոնթոյի մէջ» եւ «Մինաս Թէօլէօլեան մեր մէջ» հոդվածները (տպագրված է նաեւ «Մինաս Թէօլէօլեանի մտքերէն»):

Ամսաթերթի 1976 թ. 1-2-րդ միացյալ համարում Էլիզ Շարապիսանեան ստորագրությամբ տպագրված են «Հ. Ե. Դ» եւ «Հայ գրքի մեծարանքի ...» հոդվածները:

Հավելեմ՝ «Սփիւռք» (Բեյրութ) շաբաթաթերթի 1972 թ. հուլիսի 2-ի համարում տպագրված է Փիթեր Գոլիերի (Ֆրեզնո) «Ուիլեամ Սարոյեան» հոդվածն Էլիզ Հասըրճյանի թարգմանությամբ, իսկ 1974 թ. հոկտեմբերի 20-ի համարում՝ նրա «Հայկական իրականության նորոյթը Նոր Աշխարհի ակերտին» հոդվածը:

\*\*\*

Սա «Արձագանգ» ամսաթերթի առատ հունձքի սոսկ մոտավոր պատկերն է:  
Հուսամ՝ պակասը լրացնելու հնարավորություն կունենամ:

## SUMMARY

From 1672 to 1976 in Toronto the AYF “Simon Zavarian” chapter published the “Ardzagank” (Echo) monthly newspaper. The 58 issues were presented in 48 volumes: 8 volumes had two issues and one had 3 issues.

Many exceptional articles were published in this monthly, which can still interest not only the readers but also the specialists dealing with issues of the Armenian Diaspora and the press. The rich material presented in this monthly is the diary of five years of the lives of Armenians in Toronto. Many names were immortalized on the pages of “Ardzagang.” Due to their efforts and devotion the publication of the newspaper was realized without paid subscription and sizable financial means.

The literary pieces were chosen meticulously from Mesrop Mashtots to Paruyr Sevak, materials representing prominent figures of the world culture and Diaspora, book reviews, interpretations of interesting aspects of local and Armenian life.

All issues of the monthly newspaper are notable for their rich content.

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Արձագանգ» (Տորոնտո) ամսաթերթ, 1972 թ. 1-ին, 3-րդ եւ 11-րդ համարներ:
2. «Արձագանգ» (Տորոնտո) ամսաթերթ, 1973 թ. 11-րդ համար:
3. «Արձագանգ» (Տորոնտո) ամսաթերթ, 1974 թ. 1-2-րդ, 5-րդ եւ 12-րդ համարներ:
4. «Արձագանգ» (Տորոնտո) ամսաթերթ, 1975 թ. 9-րդ եւ 10-11-րդ համարներ:
5. «Հայրենիք» (Բոստոն) օրաթերթ, 1974 թ. մարտի 10-ի համար:
6. «Յառաջ» (Փարիզ) օրաթերթ, 1971 թ. սեպտեմբերի 11-ի եւ 12-ի համարներ:
7. «Սփիւռք» (Բեյրութ) շաբաթաթերթ, 1971 թ. նոյեմբերի 21-ի համար: